

Հայկ Դեմոյեան, *Հայկական Սպորտը Եւ Մարմնակրթութիւնը Օսմանեան Կայսրութիւնում*, Երեւան, Հայոց Յեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտ, 2009, 220 էջ:

Հայ իրականութեան սակաւ ուսումնասիրուած բնագաւառներից է հայ մարմնակրթութեան պատմութիւնը: Թէեւ հրապարակի վրայ են Բիւզանդ Թորիկեանի՝ հայ մարմնակրթական եւ սկաւտական շարժման պատմութեանը նուիրուած քառահատոր ուսումնասիրութիւնը¹, Տիգրան Սարաֆեանի *Հայ Մարմնամարզական Միութեան Պատմութեան Հետքերով...* հատորը², եւ մի քանի այլ, աւելի մասնակի բնոյթի աշխատութիւններ, սակայն հայ մարմնակրթութեան ընդհանուր պատմութիւնը տակաւին մնում է չգրուած եւ մեծ մասամբ քիչ-ծանօթ:

Հայ ժողովրդի ինքնաճանաչման եւ ազգային առողջ հպարտութեան մեծագոյն աղբիւրներից կարող է լինել հայ մարզարուեստի պատմութեան բազմահատորեակի ստեղծումը, ինչպէս նաեւ հայ մարզամշակոյթի քանդաքանի հիմնադրումը:

Հայոց Յեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտի Գիտական Խորհրդի որոշմամբ տպագրուած Հայկ Դեմոյեանի *Հայկական Սպորտը Եւ Մարմնակրթութիւնը Օսմանեան Կայսրութիւնում* մենագրութիւն-պատկերագիրը հագուագիւտ աղբիւրների եւ լուսանկարների հաւաքածոների օգտագործմամբ ի յայտ է բերում հայ մարզարուեստի անյայտ, սակայն ուշագրաւ, անգամ յուզիչ դրուագներ, որոնք վերաբերում են արեւմտահայոց մարզական մշակոյթին՝ ԺԹ. դարի վերջից մինչեւ 1920ականների սկիզբը, այսինքն՝ մինչեւ Թուրքիայի Հանրապետութեան հիմնադրումը:

Մինչեւ սոյն գրքի հրատարակումը Հայոց Յեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտը 2008ի Մեպտեմբերին կազմակերպեց նոյն թեմայով ցուցահանդես: Թույմ է, թէ կապ չախտի լինի Հայոց Յեղասպանութեան եւ մարմնակրթութեան պատմութեան միջեւ: Սակայն ինչպէս ցոյց է տալիս ողջ մենագրութիւնը, արեւմտահայերի մէջ մարմնակրթական շարժման երեւան գալը նոյնպէս ոչ-անմիջականօրէն հող է նախապատրաստել յետագայ ողբերգական զարգացումների համար, քանի որ մարզական մրցակցութեան մէջ, առաւել՝ քան որեւէ այլ տեղ, ակնյայտ են դառնում կողք-կողքի ապրող ժողովուրդների մարմնական առաւելութիւնները, եւ հպատակների առաւելութիւնների դէպքում առաջանում է տիրող ժողովրդի նախանձ եւ չարականութիւն: Այդպէս, յամենայնդէպս, պատահեց հայերի եւ թուրքերի միջեւ:

Հեղինակը նշում է, որ «*Կայսրութեան մարմնակրթական շարժման զարգացումը, չնայած քրիստոնեայ հպատակների դէմ կիրառուող խտրականութեանը եւ բռնութիւններին, արդիւնք էր առաջին հերթին հայ եւ յոյն ազգաբնակչութեան չըջնուած տեղի ունեցող արդիականացման գործընթացներով եւ թելադրուած էր որոշակի ներհամայնքային պահանջներով*» (էջ 6): Յայտնի է, որ Ի. դարի սկզբին արեւմտահայութիւնը, մասնաւորապէս Կ.Պոլսի եւ Չմիւտնիայի հայութիւնը, հոգեւոր վերելքի մէջ էր: Յատկապէս 1908ի երիտթուրքերի յեղաշրջումից յետոյ արեւմտահայութիւնը բռնել էր արդիական հասարակարգ կերտելու ուղին, ուստի եւ միանգամայն իրաւացի է Դեմոյեանը, երբ հայկական մարզարուեստի զարգացումը դիտարկում է օսմանեան հայերի հանրային-մշակութային զարթօնքի ծիրի մէջ: Աննախընթաց զարգացում

եր ապրում հայ կրթութիւնը, մշակոյթը, գիտութիւնը, միտքը, արծարծում էին ազգային երաժշտանոց, ազգային ակադեմիա հիմնելու գաղափարները... Եւ այս ամէնի հետ մէկտեղ լայն թափ էր առել նաեւ մարմնակրթական շարժումը: Ըստ 'Դեմոյեանի' *«Առաջին Համաշխարհային պատերազմի նախօրէին միայն Պոլսում գործում էին շուրջ քառասուն Հայկական մարմնամարզական ակումբներ»* (էջ 44): Մարգարուեստն օսմանահպատակ հայերի մէջ ազգային ինքնագիտակցութեան, մրցակցութեան եւ ազգային ինքնահաստատման կարեւոր ասպարէզ էր: Ազգային զարթօնը ապրող եւ երոպական լուսատրականութեան ձգտող հասարակութեան համար հրամայական էր դարձել նաեւ մարմնապէս առողջ եւ ուժեղ լինելու խնդիրը: Ինչպէս նշում է *«Մուտքի Խօսք»*-ում. *«...այդ ազգային առաջադիմութիւնն ու արդիական արժէքներ որդեգրելու հակումը որոշակիօրէն ուժեղացրեց անհանդուրժողականութեան դրսեւորումները երիտթուրք իշխանաւորների կողմից, ովքեր փորձեցին ազգային այս առաջընթացին ընդդիմանալ հայ բնակչութեան դէմ իրագործուած ցեղասպանութեամբ»* (էջ 7): Եւ իսկապէս, հայերի գերակայութեան ապացոյցներից է, որ երբեմն թուրքական իշխանութիւնները դիմել են հայ մարզիչներին՝ թուրք երիտասարդների մէջ մարզական միջոցառումներ կազմակերպելու խնդրանքով (էջ 81): Այս առաջատար դերակատարութեան փաստը, բնականաբար, հաշտ աչքով չպետք է դիտուէր թուրքական մարգարուեստի պատմագրութեան կողմից, որն անտեսել կամ, ըստ էութեան, չի արժէտրել հայերի դերը թուրքական մարմնակրթութեան պատմութեան մէջ: *«Հայկական հետք»* թուրքական թատրոնի, սպորտի, մամուլի, գրահրատարակչական ու միւս բնագաւառներում հանրապետութեան շրջանում ձեւաւորուած թուրքական պատմագրութեան կողմից դիտուել է անցանկալի ու վտանգաւոր, հետեւաբար՝ յիշատակութեան համար ոչ արժանի» (էջ 9):

Արեւմտահայոց ինքնագիտակցութեան զարթօնքի հետ մէկտեղ առաջ է մղուել նաեւ մարմնապէս առողջ եւ ուժեղ սերունդներ կրթելու, անհատական գործունէութիւնից վերանալու եւ որպէս ազգային հաւաքականութիւն հանդէս գալու, ազգի մարմնական հնարատրութիւնները բացայայտելու, օտարներին ներկայացնելու եւ նրանց հետ արժանապատօրէն մրցելու հարցը: Այս առումով յատկանշական է գրքում մէջբերուած Շաւարշ Միսաքեանի 'Կարինի Յառաջ թերթում արտայայտած միտքը. *«Հարկ է ֆիզիքապէս շտկել մէջքերը, որպէսզի դիւրանայ, լրանայ մտքի եւ սրտի ծռութիւններուն ալ սրբագրութիւնը»* (էջ 65): Այսինքն, հարցը սոսկ մարմնապէս առողջ սերունդ հասցնելը, տղաներին զինուորական ծառայութեանը եւ ինքնապաշտպանութեանը նախապատրաստելը չէ, այլ առաւել հեռահար նպատակներ, ապագայի քաղաքակիրթ հայորդիներ դաստիարակելը: *«...Հայ մարմնակրթական շարժման ջատագովներն ունեցել են ստոյգ ծրագիր եւ այդ նպատակներին հասնելու տեսանկի ռազմավարութիւն եւ գործելակերպ»*,— գրում է 'Դեմոյեանը' (էջ 79) եւ ողջ գրքի էջերում ցոյց տալիս այն նպատակամղում ջանքերը, որոնք հետետղականօրէն կիրառել են Օսմանեան Կայսրութեան հայ մարզաշխարհի գործիչները:

12 գլխից բաղկացած այս գրքում առաջին անգամ համադրուել եւ ներկայացուել են Օսմանեան Կայսրութիւնում հայկական մարմնակրթութեան ձեւաւորումը եւ զարգացման ընթացքը, առաջին հայ մարմնամարզական ա-

կումբների գործունեությունը, հայ մարզական մամուլը, առանձին իրողություններ: Հայ մարզական մամուլը եւ հայկական արխիւները դառնում են օսման եւ սպորտի պատմութեան անգնահատելի եւ յաճախ միակ սկզբնաղբիւրներ: Նկատենք սակայն, որ առկայ որոշ իրողությունների վերաբերեալ (որքան էլ որ դրանք վերաբերուեն ոչ-վաղ անցեալին), միշտ չէ, որ սպառնիչ պատասխան է տրուում: Այսպէս, Դեմոյեանը նշում է, որ «Հայկական առաջին մարզական կազմակերպութիւնների ստեղծման ստույգ ժամանակաշրջանի մասին սկզբնաղբիւրներում առկայ են իրարամերժ տուեալներ» (էջ 24, 29): Եւ իսկապէս, սոյն միտքը յայտնելով՝ նա որպէս այդպիսիք նշում է 1900ին Ջմիտնիայում հիմնուած «Արմենիա» եւ «Վասպուրական» ոտնագնդակի խմբերը, իսկ մի քանի էջ անց որպէս հայկական առաջին ոտնագնդակի խումբ յիշատակում «Բանթալիմանը» (էջ 36): Նմանատիպ փաստերը տակաւին կարիք ունեն ճշտուելու լրացուցիչ աղբիւրներով:

Գրքի Ա. գլուխը՝ «Սպորտի եւ Մարմնակրթութեան Չարգացումը Օսմանեան Կայսրութիւնում», ընդհանուր գծերով տալիս է այն պատմական-ընկերային եւ հասարակական միջավայրը, որտեղ ծնունդ առաւ հայկական մարմնամարզական շարժումը: Օսմանահայատակ հայերը միւս ազգային փոքրամասնութիւնների եւ Կայսրութիւնում ապրող եւրոպացիների հետ մէկտեղ տակաւին համիդեան ժամանակներում մասնակցութիւն են ունեցել առաջին մարզական խմբերի ստեղծմանը, հանդէս եկել մասնատրապէս ոտնագնդակի առաջին խմբերում: Հեղինակը ներկայացրել է յատկապէս երիտքորքերի՝ ազգային մարզարուեստը խթանելու ջանքերը եւ զուտ թուրքական մարզական կազմակերպութիւնները՝ որպէս թուրքական նոր ինքնութիւնը եւ ազգայնականութիւնը կերտող կարեւոր գործօններ. «...շուտով սպորտն ու սպորտային մրցակցութիւնը դառնալու էին թուրքական ազգայնականութեան ուժեղացման կարեւոր բաղադրիչներից մէկը» (էջ 17): Ուշագրաւ է, որ մինչ երիտքորքերի իշխանութեան գլուխ գալը թուրքերի շրջանում մարզական գործը եղել է առանձին անհատների մակարդակով, այն դէպքում երբ ազգային փոքրամասնութիւնների ներկայացուցիչներն ունեցել են աշխուժօրէն գործող եւ զարգացած մարզական միութիւններ: Կարելի է նաեւ այն վկայութիւնը, որ առաջին թուրքական մարզական հանդէսը հրատարակուել է հայկական *Մարմնամարզի* օրինակին հետեւելով (թուրքական բանակի սպայ եւ յայտնի իթքիհատական Սելիմ Սըրը Թարջանը եղել է *Մարմնամարզի* աշխատակիցը):

Բ. գլուխը («Հայկական Սպորտի եւ Մարմնակրթութեան Չարգացումը Օսմանեան Կայսրութիւնում») ներկայացնում է հայ մարմնամարզական շարժման սկզբնատրուը եւ զարգացումը՝ նախ որպէս կրթական համակարգի մի մաս, ապա որպէս ներհամայնքային գործունեութեան բաղադրիչ: Տակաւին 1845ին տպագրուած պոլսահայ մի հրատարակութեան մէջ կարելիութիւն է մարմնական կրթութեան նշանակութիւնը: Այս գլխում Դեմոյեանը ներկայացրել է ուսումնական ծրագրերում եւ տպագիր հրատարակութիւններում մարմնակրթութեանն առնչող տարբեր փաստեր, առաջին հայկական կազմակերպութիւնները, ինչպէս նաեւ առաջին մարմնամարզիկներին: Հայ մարզարուեստի ռահվիրաներն են Շաւարշ Զրիսեանը, Գրիգոր Յակոբեանը եւ Վահան Զերազը: Ֆրանսիական մարմնամարզական դպրոց անցած այս փայլուն եռեակի եւ նրանց համախոհների շնորհիւ է սկզբնատրուել եւ զար-

գացել պոլսահայ մարմնակրթական շարժումը: Եղեռնամահ մարզիկ, մարզական գործի անխոնջ կազմակերպիչ, հայ առաջին մարզաթերթ *Մարմնամարզի* (1911-1914) հիմնադիր-խմբագիր Շառարշ Զրիսեանը (1886-1915) սոյն հատորի գլխաւոր «հերոսներից» է: Նրա խմբագրականների եւ յօդուածների լուսապատճենները գաղափար են տալիս այս եզակի գործչի ազգանունը գործունէութեան, մարմնակրթութեան վերաբերեալ հայեացքների եւ մօտեցումների վերաբերեալ: Այս գլխում մի առանձին ենթագլուխ է կազմում «Հայկական Ֆուտբոլի Ծնունդը»՝ ներկայացնելով տակաւին 1900ականներին համիդեան բռնապետութեան պայմաններում ստեղծուած տարբեր ոտնագնդակի խմբերը (լաւագոյններից է եղել «Արաքս»ը), որոնք, սեփական մարզահագուստով եւ տարբերանշաններով, յաջողապէս մասնակցում էին Օսմանեան Կայսրութեան մայրաքաղաքում գործող մի քանի լիգաների խմբային եւ միջազգային մրցաշարերին, ինչպէս նաեւ առանձին մարզիկների անուններ (ինչպէս, «Տորք» ակումբի դարպասապահ Վ. Մատթէոսեանը, որը համարուել է Պոլսի ակումբների լաւագոյն դարպասապահներից մէկը):

Մի առանձին ենթագլուխ էլ կազմում է «Մարմնամարզի» Ծնունդը», որ ներկայացնում է առաջին հայ մարզական հանդէսի անցած կարճ (քառամեայ), սակայն խիստ բովանդակալից ուղին, գաղափարական ուղղութիւնը, պատմական նշանակութիւնը, որը եղաւ հայ պատանիների եւ երիտասարդների աննախադէպ խորհրդատուն եւ ուղեցոյցը: Նախապէս ստեղծուած որպէս պատկերազարդ ամսաթերթ՝ «Օրկան ազգային ֆիզիքական վերածնութեան», այնուհետեւ այն դարձել է «Օրկան ազգային ֆիզիքական կրթութեան»՝ *«Դժբանդ իսկ շեշտադրելով իր իրական կոչումը եւ վերածուելով Օսմանեան Կայսրութեան Հայ բնակչութեան շրջանում մարզական կեանքը խթանող կարեւորագոյն գործիքի ու միջոցի»* (էջ 50-51): Զրիսեանի հիմնած սոյն հանդէսը չի եղել սոսկ պոլսահայութեան մարզական կեանքի լրատուն եւ առաջնորդը, այն ունեցել է թղթակիցներ կայսրութեան տարբեր կէտերից (ի դէպ, գաւառներում տարածուել է նուիրատուութեան կարգով), ինչպէս նաեւ արտերկրից:

Գ. գլուխը նուիրուած է հայ մարզական կեանքին՝ Օսմանեան Կայսրութեան երկրորդ խոշոր քաղաք՝ Չմիւռնիայում («Մարզական եւ Մարմնակրթական Շարժումը Չմիւռնիայում»):

Նոր անակնկալներ է բացայայտում Դ.՝ «Սպորտի եւ Մարմնակրթութեան Չարգացումը Արեւմտեան Հայաստանում եւ Կիլիկիայում» գլուխը: Արեւմտեան Հայաստանի եւ Կայսրութեան այլեւայլ մեծ ու փոքր քաղաքներում (Կարին, Վան, Սեբաստիա, Ադաբազար, Պարտիզակ, Խարբերդ, Ուրֆա, Կեսարիա, Երզնկա, Մարզուան) եւ կամ առանձին միութիւններով զարկ էին տրում ինչպէս տարածում գտած մարզածեների (մարմնամարզութիւն, ոտնագնդակ), այնպէս էլ պակաս տարածուածների (լող, չմշկավազք, մինչեւ անգամ բէյսբոլ) զարգացմանը: Աւելի քան ուշագրաւ է, որ մարզական շարժումը ներթափանցել է նաեւ մահապետական հայ գիւղերը (ինչպէս՝ Կովտուն գիւղը, որտեղ գործել է «Չաւարեան» ոտնագնդակի ակումբը): Այս գլխում մասնաւորապէս ուշադրութիւն է դարձուել կիլիկիահայութեան մարզական կեանքին, որն այն աստիճան աշխոյժ է եղել, որ 1914ի Ապրիլին տեղի է ունեցել կիլիկեան ողիմպիական խաղեր եւ մարզահանդէս:

Ե. գլուխը՝ «Հայ Կինը Եւ Մարմնակրթութիւնը», ներկայացնում է հայ իգական վարժարաններում սկզբնաւորում մարզական դաստիարակութիւնը: Սա կարեւոր հանգամանք է, քանի որ սկզբնապէս նոյնիսկ արական վարժարաններում է մարմնամարզի դասաժամերը պերճանք համարուել, բայց ահա կարճ ժամանակաշրջանում դրանք սկսել են մուտք գործել նաեւ իգական դպրոցներ ինչպէս Պոլսում, այնպէս էլ գաւառներում: Եւ ապա՝ հայ տղամարդ մարզիկների ջանքերի շնորհիւ 1910ականներին ստեղծուել են կանանց մարմնամարզական ակումբները (դարձեալ Քրիսեանի հիմնած «Էսայեան Սանուց Միութիւն»ը): Յիրաւի ճշմարտացի է *Մարմնամարզում տպագրուած* եւ այս գլխի բնաբան դարձած միտքը, թէ «Այլ մը կրթել, միայն մարդ մը պատրաստել է, իսկ կին մը կրթելը՝ ամբողջ սերունդներ» (էջ 90):

Զ. գլուխը ներկայացնում է հայ մարզական կեանքի պատմութեան թերեւս առաջին ամենափառահեղ էջերը՝ «Հայկական Օլիմպիական Խաղերը (1911-1914 թթ.)»: Ընդամենը երեք անգամ կեանքի կոչուեցին այդ խաղերը (1911ի Մայիս, 1913ի Յունիս, 1914ի Յունիս), սակայն տեղի ունեցան ժամանակի բարձր չափանիշներին համապատասխան, դրանց մասնակցեցին հայկական մարմնամարզական ակումբներ եւ խմբակներ, ներկայացուցին տարբեր մարզածներ (մարմնամարզութիւն, հեռացատկ, վազք, գնդի հրում, սկաւառակի նետում, հեծելարշաւ), սահմանուեցին մրցանիշներ, յաղթողներն արժանացան արծաթեայ կամ ոսկեայ մեդալների եւ պարգեւների: Հայ մարմնակրթութեան տարեգրութեան նախնական փուլի այս աւելի քան ուշագրաւ էջերը յիրաւի իրօրինակ են ողջ արեւմտահայութեան եւ առհասարակ հայ անցեալի պատմութեան մէջ:

Է. գլուխը վերնագրուած է «Հայ Մարզիկների Մասնակցութիւնը Միջազգային Օլիմպիական Խաղերին»: Հայն Արեւելքի առաջին ազգն է եղել, որ մասնակցել է ոլիմպիական խաղերին՝ ի դէմս 1906ին Աթէնքում կայացած ոչ-պաշտօնական ոլիմպիականի մասնակից Յաքէթ Փափագեանի: Իսկ պաշտօնապէս հայերն ոլիմպիական խաղերի մասնակցել են 1912ին Ստոկհոլմում կայացած ոլիմպիականի ժամանակ: Բանի որ թուրքերը մարզիկ չեն ունեցել ոլիմպիականին մասնակցելու, հայերը որոշել են ուղարկել իրենց ներկայացուցիչներին: Համահայկական հանգամակութեամբ եւ սեփական միջոցներով Շուեդիա են ուղարկուել պոլսահայ երիտասարդ մարզիկներ Վահրամ Փափագեանը եւ Մկրտիչ Մկրեանը³: Սոյն գլխում մանրամասն ներկայացուել է այդ մասնակցութեան հետաքրքրաշարժ իրողութիւններով լի պատմութիւնը: Դեմոյեանի տեղեկատուութեանն աւելացնենք նաեւ, որ Շուեդիայի ոլիմպիականի մասին Փափագեանը թղթակցութիւններ է ուղարկել Կ. Պոլսի *Ազատամարտ* օրաթերթին, իսկ շուեդական մամուլը մի քանի անգամ հրատարակել է նրա եւ յատկապէս գեղամարմին Մկրեանի լուսանկարները: Ու թէի հայ մարզիկների շնորհիւ է օսմանեան դրօշը ծածանուել Ստոկհոլմի մարզադաշտում (եւ առաջին անգամ՝ ոլիմպիական խաղերի պատմութեան մէջ), շուեդները եւ միւս ազգերի ներկայացուցիչները նրանց ճանաչել են որպէս հայերի, մամուլում նրանց մասին գրելիս մշտապէս յիշել նրանց ազգութիւնը⁴:

Առանձնակի հետաքրքրութիւն է ներկայացնում հատորի Ը՝ «Մպորտը Եւ Ազգայնական Մրցակցութիւնը» գլուխը: Պատմական իրողութիւնների հիման վրայ Դեմոյեանը ցոյց է տուել օսմանեան ազգայնական անհանդուրժո-

դական միջավայրը եւ դրանց ենթախորքում՝ «Հայ եւ թուրք մարզական կեանքի համընթաց զարգացման ընթացքում երեւան եկած հակասութիւններն ու բախումները» (էջ 126): Պատմաբանը մարզական իրողութիւնների ետետում յաջողապէս դիտարկում է դրանց հոգեբանական ենթաշերտերը: Գլխում առկայ են ընդարձակ մէջբերումներ, որոնք ի յայտ են բերում թուրք-հայ մարզական մրցակցութեան բազմաթիւ դրուագներ, որոնցում առաւելութիւնը յաճախ եղել է հայկական կողմում: Այս բոլոր նշուած յաջողութիւններով հանդերձ, նոյն Բրիսեանը խիստ գնահատական է տալիս իրենց գործունէութեանը. 1914ին նա նշել է, որ չնայած «...առաջին անգամ մենք՝ Հայերս էինք, որ սբօրի, ֆութպօլի նման արեւմտեան զաղափար մը թուրքիա ներմուծեցինք, բայց ազգային մարմինները չի կարողացան անոր շուրջ բոլորուիլ եւ անով զօրանալ, մեր գործունէութիւնը մնաց շատ սահմանափակ» (էջ 134-135):

Թ. գլուխն ամենաւիոքրն է, սակայն ամենից տխուրը՝ «Հայկական Սպորտի Կորուստը Մեծ Եղեռնի Տարիներին»: Եւս մէկ ողբերգական դրուագ հայ տարագրութիւնից. անգամ Այաշում աքսորեալ մտատրականների ճակատագիրը կիսած Բրիսեանը հաւատարիմ է մնացել իր նկարագրին՝ ամէն առաւօտ ստիպելով մտատրական աքսորեալներին մարզանք կատարել:

Գրքի վերջին գլուխներն են «Հայկական Սպորտը Յետպատերազմեան Տարիներին (1918-1922): Հ.Մ.Ը.Մ.ի Ստեղծումը», «Մարմնակրթութիւնը Հայկական Որբանոցներում» եւ «Հայկական Սկաուտական Շարժման Ծագումն Ու Չարգացումը», որոնցում դարձեալ փաստական եւ պատկերային հարուստ նիւթի հիման վրայ տրւում է Մեծ Եղեռնից յետոյ արեւմտահայութեան մարզական գործունէութեան պատմութիւնը: Գոյատեւելու հայկական անընկճելի բնագոյն ի յայտ է եկել այս ասպարէզում նոյնպէս. անգամ միլիոնաւոր զոհեր տալուց յետոյ հայ երիտասարդութիւնն իր մէջ ոյժ եւ կորով է զտել համախմբուելու եւ զարգացնելու իր մարմնական կարողութիւնները, այս անգամ՝ որբանոցների միջոցով: Գրեթէ բոլոր որբանոցներն ունեցել են ռոտագնդակի խմբեր: Մինչեւ անգամ Պոլսում տեղի են ունեցել որբանոցային ռդիմպիական խաղեր: Յիրաւի աննախադէպ երեւոյթ՝ մարզարուեստի պատմութեան մէջ: Նուազ աննախադէպ եւ արտասովոր չէ մարզակումբների եւ սկաուտական խմբերի ստեղծման փաստը նոյնիսկ չարաղէտ Տէր Զօրում: Իսկ 1920ականների սկզբին պոլսահայութեան մէջ սկսուած սկաուտական շարժման նպատակը դարձաւ հայ ազգի հաւաքական եւ համագործակցող ոգու կերտումը՝ «ցեղը ազնուացնելու» տեսլականով, որը յետագայում պիտի անգնահատելի դերակատարութիւն ունենար սփիւրջահայ գրեթէ բոլոր մեծ համայնքների կրթական եւ հանրային կեանքում:

Անշուշտ, ժամանակի մամուլը, յուշագրական գրականութիւնը եւ այլ արխիւների ուսումնասիրութիւնը նորանոր փաստեր ի յայտ կարող է բերել հայ մարզական կեանքի լիակատար պատմութեան համար:

Հայկական Սպորտը եւ Մարմնակրթութիւնը Օսմանեան Կայսրութիւնում պատկերագրքի ընթերցանութիւնը հաճելի եւ յուզիչ անակնկալներ է մատուցում ընթերցողին, յատկապէս հայ մշակոյթի տարբեր գործիչների՝ մարզական կեանքին մասնակցութեան վերաբերեալ: Այսպէս, պարզում է, որ հանրային-քաղաքական գործիչ Մինաս Չերազն է անուանակոչել 1908ին կազմաւորուած «Տորք» ակումբը. Կոմիտաս Վարդապետն է նախագահել 1913ի հայկական ռդիմպիական խաղերի բացումը՝ եզրափակիչ մասում կատարե-

լով նաեւ մրցանակաբաշխութեան արարողութիւնը: Իսկ մեծատաղանդ բանաստեղծ Մատթէոս Զարիֆեանը յաջողութիւններ է ունեցել նաեւ մարմնամարզութեան ասպարէզում: Այստեղ կը ցանկանանք մեր կողմից անելացնել, որ հայ բանասէր-մատենագէտ Արմենակ Սալմասեանը եւս ակտիւ է եղել մարզական կեանքում: Նա եղել է Կ.Պոլսի Ռոպերթ Քոլէջի բասկետբոլի խմբի անդամ (պահպանուել է այդ խմբի 1908ի լուսանկարը, մարզիչն ամերիկացի է, իսկ խաղացողները՝ յոյն, բուլղարացի եւ երեք հայ), իսկ 1919ին ՀՍԸՄ ողիմպիական խաղերի ժամանակ եղել է մրցավար⁵:

Եւ վերջապէս գիրքը կարեւորում է պատմական լուսանկարների առատութեամբ: Խմբանկարներ եւ լուսանկարներ՝ անցեալի հայ մարզիկների համեստ, լրջախոհ, արժանապատիւ, առանց ցուցադրականութեան եւ պաթոսի, մտաւորական դէմքեր, ինչպէս նաեւ քաղաքների, մարզադաշտերի պատկերներ (հիմնականում՝ տուեալ ժամանակաշրջանի բացիկներից), գրքերից եւ մամուլից բազմաթիւ էջեր եւ այլազան պատկերներ (խաղադաշտերի յատակագծեր, ոտնագնդակի մրցախաղերի խաղացանկը, վարժանքների ուղեցոյցներ, գրքերի շապիկներ եւ նկարազարդումներ, մարզական պարգեւներ) եւ քարտէզներ: Հայկ Դեմոյեանը մինչեւ անգամ կազմել է իր տեսակի մէջ եզակի քարտէզ՝ «Սպորտը Արեւմտեան Հայաստանում եւ Օսմանեան Կայսրութեան Հայաբնակ Վայրերում (1900-1922 թթ.)» (էջ 64), որից տեղեկանում ենք, որ Արեւմտեան Հայաստանում եւ Կ.Պոլսում եղել են 40ից ւաւելի մարմնակրթական ակումբներ եւ միութիւններ, ոտնագնդակի 17 ակումբներ եւ խմբեր, 10ից ւաւելի սկաուտական խմբեր:

Տպագրական բարձր որակը, ճաշակով՝ գեղագիտական եւ ակնահաճոյ ձեւատրուումը, բնոյթով՝ թէ՛ պատմագիտական եւ թէ՛ հանրամատչելի, բովանդակութեամբ՝ թէ՛ պայծառ եւ թէ՛ տխուր այս հատորիկը դարձնում են իր տեսակի մէջ յիշատի եզակի մի հրատարակութիւն, որ հարստացնում է մեր պատկերացումներն արեւմտահայութեան անցեալի մի չափազանց ուշագրաւ կողմի վերաբերեալ: Միանգամայն փափաքելի եւ անհրաժեշտ է սոյն հրատարակութիւնը տեսնել անզլերէն եւ թուրքերէն լեզուներով բարգմանուած:

ԱՐԾՈՒԻ ԲԱՍՉԻՆԵԱՆ
artsvi@yahoo.com

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ Բիւզանդ Թորիկեան, *Պատմութիւն Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան, Հտր. Առաջին, Սկիզբէն Մինչեւ 1939 թ.*, Անթիլիաս, Տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1995. *Հտր. Երկրորդ՝ 1940-1974*, Պէյրութ, Տպ. Կ. Գապասագալեան, 1999. *Հտր. Երրորդ՝ 1975-1990*, Պէյրութ, Տպ. Կ. Գապասագալեան, 2003, *Հտր. Չորրորդ՝ 1991-2007*, Պէյրութ, Տպ. Կ. Գապասագալեան, 2007:
- ² Տիգրան Սարաֆեան, *Հայ Մարմնամարզական Միութեան Պատմութեան Հետքերով...*, Մատենաշար եւ խմբագրում «Նայիրի» շաբաթաթերթի, Լիբանան, 2007:
- ³ Ի դէպ, շուեղական գրականութեան մէջ ստոկիոլմեան ողիմպիականին հայ մարզիկների մասնակցութեան փաստն արձանագրուել է արդէն 1912ին (տե՛ս՝ Gustaf G:son Uggla, *Olympiska Spelen I Stockholm*, Stockholm, 1912, էջ 386-388, 397-400):
- ⁴ Ինչպէս յետագայում վկայել է Վահրամ Փափազեանը, «Շուեղացիներու կողմէ հայերու հանդէպ ցոյց տուած քնքի վերաբերմունքը մեզի զարմանք պատճառեց: Ուր

որ կ'երթայինք, «դուք հերոս, ազնուական ազդ մըն էք, յաճախ մենք ալ մասնակից
եղած ենք ձեր տառապանքներուն», կը կրկնէին» (Վահրամ Փափազեան, *Մէր, Մէր,
Մէր, Բարձրացիր Բարձրացուր*, Պէյրուք, Տպ. Սեւան, 1962, էջ 59):

- ⁵ Տե՛ս՝ Եղիշէ Չարենցի Անուան Գրականութեան Եւ Արուեստի Թանգարան, Արմե-
նակ Սալմասլեանի արքուն: